Կատարող՝ «ԽԱՌԱՏՅԱՆ ԱՐԽԻՏԵԿՏՍ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԵՎ ԷՍՔԻԶԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Տարածքի նկարագրությունը և առկա խնդիրները

1.2 Ռելիեֆը և բնակլիմայական պայմանները

1.3 Բարեկարգման հայեցակարգի հիմնավորումը և ֆունկցիոնալ գոտիավորման սկզբունքները:

2. ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՒ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿ

2.1 Իրավիճակային և գլխավոր հատակագծեր

2.2 Տարածական ֆունկցիոնալ գոտեվորումը և տեղաշարժման ուղիները

2.3 Կոշտ մակերեսները և սալարկման տարբերակները

2.4 Կանաչապատ տարածքների տեղակայման սխեմա

2.5 Ջրային տարածքների տեղադիրքն ու դասավորությունը

2.6 Փոքր ճարտարապետական ձևեր

2.7 Ներառականության ապահովման միջոցառումներ

2.8 Ինժեներական ենթակառուցվածքների և տարրերի դասավորությունը

2.9 Շենքերի կառուցման ճարտարապետական մոտեցումներ

2.10 Նախագծված շինություններ, ակտիվ հանգստի գոտի և խաղահրապարակ

- Ամֆիթատրոն,
- ՏԻՌ – Տեղեկատվության, ինտերակտիվության և ռեսուրս-կետրոն
- Սրճարան,
- Ակտիվ հանգստի գոտի (սպորտային հրապարակ),
- Խաղահրապարակ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Տարածքի նկարագրությունը և առկա խնդիրները

Այգու բարեկարգման սույն հայեցակարգն ու էսքիզային առաջարկը կազմվել է Գավառի համայնքապետարանի կողմից՝ նախագծահաշվային ուրվագծային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի շրջանակներում:

Նախագծային աշխատանքների մեկնարկից առաջ իրականացվել է Գավառ քաղաքի բարեկարգմանը ենթակա այգու տարածքի ուսումնասիրություն:

Այգու տարածքնը գտնվում է՝ ***Մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ, քաղաք Գավառ Ռ. Զախարյան փողոց 2 հողամաս*** հասցեում **(կադաստրային ծածկագիր 05-001-0376-0068, 05-001-0376-0069)**:

Կատարված ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այգու տարածքում կանաչապատված տարածքները անխնամ են, ծառերը գտնվում են վատ վիճակում:

Տեղի բնակիչները այգին ընկալում են որպես կանաչապատ տարածք, այլ ոչ թե հանգստի գոտի: Այգում հանգստի ենթակառուցվածքներ գործնականում չկան, իսկ կանաչապատման մակարդակը չափազանց վատ է և ֆունկցիոնալ առումով անհասկանալի: Կա միայն մեկ ճեմուղի, որը նախատեսված է հուշարձանին մոտենալու համար: Կանաչապատման միջին և ստորին մակարդակ գրեթե չկա, խոտածածկը բազմաթիվ տեղերում վնասված է: Առկա ծառերը հիմնականում բարդիներ են, որոնք տեղակայված են անկանոն և դրանց մի մասը վնասված է: Կան նաև դրանցից թափված սերմերից աճած մի քանի տարվա մատղաշ շիվեր:

Տարածքի հետ կապված հիմնական խնդիրները.

- Անկանոն և ցածրորակ կանաչապատում,
- Գործառնական գոտիների և տեսարժան վայրերի բացակայություն,
- Քայլուղիների և հեծանվուղիների բացակայություն,
- Կարճաժամկետ հանգստի հարմարանքների և ենթակառուցվածքների բացակայություն,
- Լուսավորության բացակայություն:

Առկա շինություններ.

Այգին մասամբ կառուցապատված է, առկա է **919.73 քմ.** Բազալտից սալարկված տարածք, **122 մ** երկարությամբ պարիսպ փողացին հարող սահմանին, **38.65 քմ.** Նորակառույց հուշարձան, խաչքար, **48.81 քմ**. Գերեզմանի տարածք, **10,1 մ** երկարությամն հուշարձան պատ:

Տե՛ս հավելված 1 Էջ Ճ02. 2

Նախագծում առաջարկվող բարեկարգման գործողությունները և փոփոխությունները մեծ մասամբ հիմնված են բնահեն լուծումների վրա: Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել

տարածքի ռելիեֆը և թեքությունները, բնակլիմայական պայմանները, շրջապատող բնական և մարդածին միջավայրը:

Առաջարկվող լուծումները հիմնված են տարածքի կանաչապատման վիճակի բարելավման, կլիմայակայուն լանդշաֆտի ձևավորման և բնակչության հանգստի համար առողջ միջավայրի ստեղծման սկզբունքների վրա:

Մանրամասները տե՛ս հավելված 1 էջ Ճ02. 1 ԻՐԱՎԻՃԱԿԱԳԻՐ
Ուսումնասիրվել են տարածքի առկա լանդշաֆտային, ֆունկցիոնալ և կառուցվածքային առանձնահատկությունները, կանաչապատման վիճակը, շարժման հիմնական ուղղությունները և հանրային օգտագործման բնույթը: *Մանրամասները տե՛ս հավելված 1 էջ Ճ02. 2 , Ճ02. 3 ՏԵՂԱՆՔԻ ՌԵԼԻԵՖԻ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻՃ:*

1.2 Ռելիեֆը և բնակլիմայական պայմանները


Այգու ռելիեֆի թեքությունները տարբեր են՝ տատանվում են 0-16.9%-ի սահմաններում:

Այգու ռելիեֆի վերաբերյալ մանրամասն տեղեկությունը ներկայացված է հավելված 1, էջ Ճ02. 2 :


Այգու տարածքը գտնվում է Գավառ քաղաքի կենտրոնական հատվածում՝ ծովի մակերևույթից 1944–1945մ բարձրության վրա: Ակնկալվող կլիմայական պայմանները կարևոր դեր են խաղում այգու նախագծման և լանդշաֆտային լուծումների ընտրության գործում: Ձմռանը ջերմաստիճանը տատանվում է -20°C-ից -35°C-ի, իսկ ամռանը՝ +15°C-ից +25°C-ի սահմաններում, ինչը համապատասխանում է ցրտադիմացկունության 4-5-րդ գոտուն: Ամառանը միջին եռամսյակային ջերմաստիճանը կազմում է՝ +14.7°C, ձմռանը միջին եռամսյակային ջերմաստիճանը կազմում է՝ -6.2°C

Օդի միջին տարեկան խոնավությունը տատանվում է 70%-ի սահմաններում, ինչը ազդում է բուսականության ընտրության և ոռոգման համակարգերի արդյունավետության վրա:


ՔԱՄԻՆԵՐԻ ՎԱՐԴ



Քամու հաճախականության վարդ



Քամու արագության վարդ



Քամու ուժգնության վարդ

Վերոնշյալ կլիմայական պայմանները ցույց են տալիս, որ Գավառ քաղաքը բնորոշվում է՝ բարձրադիր տարածքներին հատուկ արտահայտված, սեզոնային ջերմաստիճանային տատանումներով՝ տաք ամառներով և ցուրտ ձմեռներով:

Ամառային ամիսներին արձանագրվող բարձր ջերմաստիճանները, ինչպես նաև ձմռան ընթացքում զրոյից ցածր ջերմաստիճանները, պայմանավորում են բուսականության ընտրության նկատմամբ խիստ և նպատակային մոտեցում իրականացնել:

Այս հանգամանքից ելնելով՝ այգու կանաչապատման համար առաջարկվում է կիրառել այնպիսի ծառատեսակներ, թփեր և խոտաբույսեր, որոնք կգոյատևեն նման կլիմայական պայմաններում:

Իսկ նախագծված Շինությունները ենթակա են բարձր դասի ջերմամեկուսացման:

1.3 Բարեկարգման հայեցակարգի հիմնավորումը և ֆունկցիոնալ գոտիավորման սկզբունքները

Սույն հայեցակարգի նպատակն է ձևավորել Գավառ համայնքի տարածքում գտնվող նախկին «Ժակի բուլվար» կոչվող այգու, ներկայումս «Երազանքի այգու» ձևավորման և զարգացման գաղափարը, սահմանել հիմնական գոտիները, ստեղծման սկզբունքներն ու չափանիշները:

«Երազանքի այգու» ստեղծման հիմնական նպատակն է՝ կանաչ տնկարքների, ջրածածկ տարածքների և բնական այլ բաղադրիչների խելամիտ զուգորդմամբ ձևավորել այնպիսի կենսամիջավայր, որը ամենաբարձր մակարդակով կաջակցի Գավառ համայնքի բնակչության հանգստի կազմակերպմանը, բարեկեցությանը, առողջության պահպանմանն ու վերականգնմանը, ինչպես նաև հնարավորություններ և պայմաններ կստեղծի, հանուն այգու ֆինանսական կայունության և ինքնաբավության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար:

Երազանքի այգին լինելու է հատուկ կազմակերպված լանդշաֆտով, տարբեր բուսատեսակներով հարուստ, արհեստականորեն ձևավորված կենսամիջավայր՝ որտեղ ներդաշնակորեն միմյանց հետ զուգորդվում են բնական բաղադրիչները, տարածքի կազմակերպական և ճարտարապետական այլընտրանքային լուծումները:

Նպատակային ձևով ստեղծված կանաչապատ և խոնավ տարածքները, անցուղիները, ակտիվ հանգստի վայրերը և հեծանվուղին հնարավորություն կտան լրացնել քաղաքային միջավայրում պակասող զգացողությունները, ազատվել սթրեսային իրավիճակներից և ձևավորել հանգստի համար կատարյալ միջավայր:

Համայնքի բնակչության համար այգին կունենա հետևյալ հիմնական դերակատարությունները՝

- Ծառայել որպես միջավայր՝ հանգստի, զրույցների, ակտիվ շարժման, ուսուցումների և մարզումների համար,

- Ձևավորել նպաստավոր պայմաններ՝ կրթության և զարգացման միջավայրի համար,
- Նվազեցնել բնակչության հոգեբանական լարվածության մակարդակը, առաջացնել լավ տրամադրություն և դրական էմոցիաներ,
- Ունենալ բուժական ազդեցություն՝ բնական միջավայրի դրական ներգործությամբ,
- Բնակչությանը ծանոթացնել տնտեսական գործունեության նոր տեսակների և հնարավորությունների հետ, որոնք ցուցադրված կլինեն այգու տարածքում և կնպաստեն այգու ֆինանսական կայունությանն և ինքնաբավությանը:

Այգին կազմված է իրար հետ անբաժանելիորեն զուգորդված և ֆունկցիոնալ առումով իրար փոխլրացնող մի քանի գոտիներից.

- Հանգստի և ժամանցի գոտի,
- Մարզական և խաղային գոտի,
- Ոսումնա-կրթական գոտի,
- Տնտեսական կամ արտադրական գոտի:

Այգին նախագծվում է որպես լանդշաֆտային մեկ ամբողջություն, որպես կլիմակայուն համայնքային կանաչապատ տարածքի մի յուրօրինակ նմուշ, տարածքային պլանավորման և բնահեն լուծումների զուգորդմամբ ստեղծված ենթակառուցվածքներով, այդ թվում՝ կանաչապատ տարածքներով, ջրային էկոհամակարգի և անձրևաջրերի կառավարման, լուսավորության ու արևային լուսաէլեկտրական համակարգերի, խաղահրապարակների, ամֆիթատրոնի, ճեմելու, հեծանվային ուղիների և կրթական տարածքների ներառմամբ:

2. ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՒ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՁԱՐԿ

2.1 Իրավիճակային և գլխավոր հատակագծեր

Առաջարկվող նախագիծը ներկայացնում է այգու բարեկարգման հայեցակարգ, որտեղ հանրային կանաչապատ տարածքը դիտարկվում է որպես հանգստի գոտի:

Այգին ընկալվում է որպես բացօթյա կրթական հարթակ, որտեղ յուրաքանչյուր տարր՝ ճանապարհը, շենքը, բույսը կամ ջրային միջավայրը ունեն և՛ ուսուցողական, և՛ ռեկրեացիոն նշանակություն:

Քայլուղիների, կանաչ գոտիների և հանրային հարթակների համակարգը զարգանում է կենտրոնից՝ ճառագայթաձև տրամաբանությամբ:

Տե՛ս՝ հավելված 1 էջ Ճ02. 4, Ճ02. 5, Ճ02. 6,

Նախագծի ձևավորման հիմքում դրված է հայկական գորգի գաղափարը, իսկ հատակագծային լուծումների գաղափարական առանցքում՝ բնական ներդաշնակ միջավայրի ձևավորման առաջնահերթությունը:

Հայկական գորգին բնորոշ երկրաչափական կառուցվածքները, կենտրոնական առանցքները և կրկնվող նախշային ռիթմերը վերիմաստավորում են այգու հատակագծային լուծումները: Իսկ բնահեն լուծումները, արդյունավետ կերպով կնպաստեն բնապահպանական խնդիրների լուծմանը, կօգնեն ձևավորել տնտեսապես կենսունակ ու կայուն այլընտրանք՝ ենթակառուցվածքների երկարատև կայունության ապահովման համար:

Այգին ընկալվում է որպես մեկ ամբողջական հյուսվածք, որտեղ յուրաքանչյուր հատված տրամաբանորեն կապված է մյուսի հետ՝ ստեղծելով հստակ և մշակութային ինքնությամբ տարածք, որն ինքնին ուսուցողական բնույթ ունի:

Նախագծի գաղափարական առանցքում դրված մյուս կետը, դա կանաչապատ տարածքների անընդհատությունն է: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել առավելագույնս բնահեն լուծուների սկզբմունքին համապատասխան միջավայր քանի որ կանաչապատ տարածքների անմիջական հաղորդակցությունը չի ընդհատվում այլ ընդհատվում են մարդկանց զբոսնելու համար նախատեսված հարթակները, որոնց կապը իրար հետ նախատեսվում է իրականացնել կամրջակների միջոցով: Սա նաև ենթադրում է հանրության կողմից կանաչ տարածքների և ընդհանրապես բնական միջավայրի հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորումը խթանող մոտեցում:

2.2 Տարածական ֆունկցիոնալ գոտևորումը և տեղաշարժման ուղիները

Այգին կազմված է իրար հետ անբաժանելիորեն զուգորդված և ֆունկցիոնալ առումով իրար փոխլրացնող մի քանի հատվածներից՝

- Զբոսանքի և հանգստի տարածք, այդ թվում նաև ջրամերձ,
- Բացօթյա դասընթացների, միջոցառումների, անհատական և խմբային զրույցների տարածք,
- Ակտիվ հանգստի և ֆիլմդիտումների տարածք,

- Կայուն գյուղատնտեսության փորձացուցադրական արտադրական տարածք,
- Սրճարան, բացօթյա համտեսի և թեյախմության տաղավարներ,
- Խաղահրապարակ,
- և այլն:

Տեղաշարժման համակարգը նախագծված է հետիոտների և հեծանվորդների համար՝ ապահովելով անվտանգ, անխոչընդոտ և հաճելի միջավայր բոլոր տարիքային խմբերի համար: Հետիոտն և հեծանվային ուղիները իրականացված են պահպանելով ներառականության սկզբմունքները հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար: ճանապարհների երկայնքով աստիճանաձև ելուստներ չկան նիշերի տարբերությամբ բոլոր տարածքները լուծված են թեքահարթաների ու կամրջակների միջոցով:

Հեծանվային ուղիները կազմակերպված են այնպես, որ հասանելիություն ապահովեն բոլոր շինությունների համար, ինչպես նաև չխանգարեն մարդկանց ովքեր զբոսնում են:

Տե՛ս հավելված 1 էջ Ճ02. 3, Ճ02. 7, Ճ02. 8,

2.3 Կոշտ մակերեսները և դրանց սալարկման տարբերակները

Գոյություն ունեցող ռելիեֆից և ճեմուղի/հեծանվային ճանապարհի տեղակապման նախագծային լուծումներից ելնելով.

- Եզրաքարերը նախատեսել բազալտից կամ գրանիտից,
- սալվածքները՝ բազալտե կամ գրանիտե սալերով կամ ջարդասալերով,
- երթևեկելի հատվածները՝ ջրաթափանց ծածկույթով, պեռլիտային հիմքով կամ դրան համարժեք ֆիզիկական հատկություններ ունեցող նյութերով:
- Մնացած մայթերը նախատեսել բազալտե կամ գրանիտե սալերով կամ քարե չորսվակասալերով՝ տվյալ համայնքի կամ մարզի առանձնահատկությունները, ինչպես նաև առկա ռեսուրսները հաշվի առնելով:

2.4 Կանաչապատ տարածքների տեղակայման սխեմա

Կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 9800 քառ. մետր, որը կազմում է հողամասի 66.4 %-ը: Որից՝ 1330 քառ. մետրը նախատեսվում է որպես գյուղատնտեսական արտադրական տարածք՝ բարձրարժեք բանջարաբույսերի և խոտաբույսերի, ինչպես նաև պտղա-հատապտղային բույսերի մշակության համար:

2.5 Ջրային տարածքների տեղադիրքն ու դասավորությունը

Այգում ջրային տարածքները նախատեսվում է կառուցել և ձևավորել առավելագույնս բնական լճակների տեսքով ու բնահեն լուծումներով:

Նախագծվել է թվով 4 ջրային ավազան, յուրաքանչյուը մոտ 100 քառ. մետր մակերեսով: Ջրային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 400 քառ. մետր:

2.6 Փոքր ճարտարապետական ձևեր

Փոքր ճարտարապետական ձևերից (ՓճՁ) այգում նախատեսվում են տեղադրվել՝ նստարաններ, աղբամաններ, տաղավարներ, լուսատուներ և որոշ հատվածներում՝ ցանկապատեր, որոնց նպատակն է ընդգծել տարածքի գոտիավորումը, ինչպես նաև բարձրացնել տարածքի օգտագործման հարմարավետությունն ու գեղատեսիլությունը:

Այգում նախատեսվում է ներառել **նստարաններ**, որոնք իրենց տեսքով համապատասխանում են այգու ճարտարապետական ոճին:

Նստարանի չափերը կազմում են՝ 3.4x1.8մ, քանակը՝ **28 հատ**:

Այգում նախատեսվում է ներառեղադրել **աղբամաններ**, քանակը՝ **28 հատ**:

Այգում նախատեսվում է տեղադրել նաև **լուսատուներ**, որոնց քանակը և տեղադիրքը կհստակեցվի նախագծման փուլում, ըստ պատվիրատուի պահանջի:

2.7 Ներառականության ապահովման միջոցառումներ

Մատչելի մուտքեր և տեղաշարժ

Բնակչության սակաշարժ խմբերի համար ներառականությունը՝ մատչելի տեղաշարժումը ապահովված է թեքահարթակների, կամրջակների միջոցով բոլոր հիմնական մուտքերում, դրանց նորմերին համապատասխան (թեքությունը ոչ ավելի քան 5–8%),

Հետիոտն և հեծանվային ուղիները իրականացված են պահպանելով ներառականության սկզբունքները՝ հաշվի առնելով բնակչության հաշմանդամ և սակավաշարժ խմբերի կարիքները: Ճանապարհների երկայնքով աստիճանաձև ելուստներ չկան, նիշերի տարբերությամբ բոլոր տարածքներում լուծումները տրված են թեքահարթաների ու կամրջակների միջոցով:

Նախատեսված են լայն արահետներ (1.5 մ գերազանցող չափով), այդ թվում անվասայլակների անցմանը հարմարեցնելու համար:

Ներառական խաղահրապարակներ

Տարբեր տարիքի և կարողությունների երեխաների համար նախատեսվել են խաղային սարքեր, որոնք կունենան.

- Ռետինե անվտանգ ծածկույթ,
- Ճոճանակներ և խաղային տարրեր՝ սայլակ օգտագործողների համար,
- Զգայական խաղային գոտիներ:

Մատչելի սանհանգույցներ

Նախատեսվում է առնվազն 1,1 մ լայնությամբ դռներով և շարժման համար բավարար տարածքով, հենակներով և հատուկ սարքավորումներով սանհանգույց:

Սոցիալական և կրթական հատվածների ներառականությունը և հասանելիությունը ապահովելու նպատակով նախատեսվում է բացօթյա և փակ կրթական տարածքները՝ ամֆիթատրոնը և ՏԻՌ կենտրոնը ապահովել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար անհրաժեշտ տեխնոլոգիաներով ու հարմարություններով:

2.8 Ինժեներական ենթակառուցվածքների և տարրերի դասավորությունը

Նախատեսվում է կառուցել անձրևաջրերի հավաքման կայան, իսկ սպորտային դաշտի տրիբունաների ծածկը նախատեսվում է իրականացնել արևային լուսաէլեկտրական կայանի պանելների միջոցով, որոնք կծառայեն ոչ միայն որպես այլընտրանքային էներգիայի ստացման աղբյուր, այլ նաև որպես տանիքային ծածկ:

Այգու տարածքում անհրաժոշտ ինժեներական ենթակառուցվածքների տեսակներն ու տարրերի դասավորությունը կորոշվի նախագծման փուլում համապատասխան մասնագետների կողմից:

2.9 Շենքերի կառուցման ճարտարապետական մոտեցումներ

Այգու տարածքում նախատեսվող բոլոր շինությունները նախագծված են մեկ հարկանի և լանդշաֆտին ինտեգրված ճարտարապետությամբ:

Ճարտարապետական լուծումները հիմնված են՝

- Մարդակենտրոն մասշտաբի,
- Հորիզոնական զարգացող ծավալների,
- Բնական լուսավորության ապահովման,
- Կանաչ տանիքների և պատերի,
- Արևային լուսաէլեկտրական պանելների,
- Տեղական և բնական նյութերի կիրառությայն վրա:

2.10 Նախագծված շինություններ, ակտիվ հանգստի գոտի և խաղահրապարակ

Այգու ֆունկցիոնալ պահանջներն ապահովելու համար նախագծվել են հետևյալ շինությունները՝

- ԱՄՖԻԹԱՏՐՈՆ,
- ՏԻՌ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ԻՆՏԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ,
- ՍՐՃԱՐԱՆ Եւ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ:

ԱՄՖԻԹԱՏՐՈՆ

Նախատեսվում է կառուցել ամֆիթատրոն՝ ներկայացումներ, տոնակատարություններ, ֆիլմդիտումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար:

Ամֆիթատրոնը հանդիսանում է այգու առանցքային կետերից մեկը:

Կառուցված է բնահեն լուծումներով տեղանքի ռելիեֆը առավելագույնս օգտագործելով:

Տարածքը նախատեսված է կրթական, մշակութային և համայնքային միջոցառումների համար:

Նախատեսվում են հատուկ նախագծված կանաչ պատեր և տանիքներ՝ ջերմային հարմարավետությունը բարելավելու համար:

Տանիքը նախատեսվում է իրականացնել բնական կանաչապատումով՝ շինության ծավալային ձևից ելնելով:

Կոնստրուկտիվ կրող համակարգը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնից՝ կրողունակությունն ապահովելու նպատակով:

Նստարանները նույնպես նախատեսվում է իրականացնել բետոնից՝ երկարակեցությունն ապահովելու նպատակով:

Ամֆիթատրոնի եզրային հատվածներում նախատեսվում է իրականացնել վիտրաժներ ներքին տարածության լուսավորությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև տանիքի ետնամասում նախատեսվում են պատուհանների բացվածքներ:

Ներքին տարածությունը նախատեսվում է օգտագործել, որպես տեխնիկական սրահ, այգու սպասարկման համար աշխատակիցների սենյակներ, սպորտային տարածքի սպասարկման համար հանդերձարաններ և կրթական նպատակով նախատեսված դահլիճ:

Ամֆիթատրոնը նախատեսված է մոտ **120 մարդու** համար:

Ամֆիթատրոնի առավելագույն բարձրությունը կազմում է՝ **3.8մ:**

Ամֆիթատրոնի օգտակար մակերեսը կազմում է՝ **358.23 ք.մ.:**

Տե՛ս հավելված 1, էջ Ճ03.3, Ճ03.4

ՏԻՌ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ԻՆՏԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՏԻՌ-ը հանդիսանում է այգու տեղեկատվական կենտրոն, համայնքային հանդիպումների և քննարկումների տարածք:

Հիմքերը նախատեսվում է իրականացնել կետային:

Շինության կրող կոնստրուկցիաները նախատեվում է իրականացնել փայտից:

Շինության ուղղահայաց հատվածները նախատեսվում է իրականացնել ամբողջությամբ վիտրաժներով:

Տանիքածածկը նախատեսվում է իրականացնել բնական կանաչապատ խոտածածկույթով:

Շինության արտաքին առավելագույն չափերը կազմում են՝ **18.15 x 9.20 մ:**

Շինության հարկի բարձրությունը կազմում է՝ **1 հարկ- 4.50մ**

Շինության արտաքին առավելագույն չափերով մակերեսը կազմում է ՝ **166.98 քմ.**

Տե՛ս հավելված 1, էջ Ճ03.1, Ճ03.2

ՍՐՃԱՐԱՆ

Այգու տարածքում նախատեսված է նաև բացօթյա սրճարան, որը դիտարկվում է ոչ թե որպես առանձին առևտրային օբյեկտ, այլ որպես այգու սոցիալական և հանրային կյանքի բնական շարունակություն: Սրճարանը տեղակայված է լանդշաֆտի հետ ներդաշնակ դիրքում՝ պահպանելով տեսողական կապը կանաչ միջավայրի և կենտրոնական հուշարձանային տարածքի հետ:

Ճարտարապետական լուծմամբ սրճարանը նախագծված է թեթև, բաց կառուցվածքով՝ լայն բացվածքներով և բացօթյա նստատեղերով, ինչը թույլ է տալիս միջավայրը ընկալել որպես մեկ ամբողջություն: Կիրառվում են բնական և տեղական նյութեր, կանաչապատ տարրեր և ստվերածածկ լուծումներ՝ ապահովելով հարմարավետ միկրոկլիմա տարբեր եղանակային պայմաններում:

Սրճարանի հիմքերը նախատեսվում է իրականացնել կետային, միմյամց կապված պահանգներով համամատաբար մեծ թռիչներ ապահովելու ու միջավայրին նվազագույն վնաս պատճառելու նպատակով: Սյուների կրող տարրերը նախատեսվում է իրականացնել մետաղից երկարակեցությունը ու կրողունակությունը ապահովելով, որը երեսապարված կլինի փայտով, բնական տպավորությունը ապահովելու նպատակով: Տանիքում նախատեսվում է օգտագործել մետաղական և փայտե կոսնտրուկցիաներ, իսկ տանիքածածկը նախատեսվում է բիտումային կղմինդրից:

Օբյեկտը նախատեսված է սեզոնային առևտուր իրականացնելու համար: Ցուրտ ջերմաստիճանային պայմաններում նախատեսվում է իրականացնել ապակեպատում:

Ֆունկցիոնալ առումով սրճարանը խթանում է այցելուների այցը և երկարատև մնալը այգում՝ ստեղծելով շփման, հանգստի և դիտման հարթակ: Այն նպաստում է օրվա տարբեր ժամերին այգու տարածքի ակտիվ օգտագործմանը, առանց խաթարելու այգու խաղաղությունն ու էկոլոգիական բնույթը:

Սրճարանի տարածքում նախատեսվում է իրականացնել ընդհանուր օգտագործման երեք սանհանգույց, որոնցից մեկը բնակչության սակավաշարժ խմբերի համար:

Սրճարանի ֆունկցիոնալ օգտագործումը նախագծվել է՝ մի մասը այգու կողմից, իսկ մյուս մասը փողոցի կողմից, որոնց մետեցումները միմյանց հետ չեն առնչվում:

Սրճարանի ծածկի առավելագույն բարձրությունը կազմում է՝ **6.3մ:**

Սրճարանի օգտակար մակերեսը ամբողջությամբ բացօթյա օգտագործելու դեպքում կազմում է՝ **470.04 ք.մ.:**

Սրճարանի օգտակար մակերեսը միայն պարփակված օգտագործելու դեպքում կազմում է՝ **209.00 ք.մ.:**

Տե՛ս հավելված 1 էջ Ճ03.5 ;

ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Օժանդակ շինությունը գտնվում է անմիջապես սրճարանի հարևանությամբ:

Այն իր մեջ ներառում է սրճարանը սպասարկող խոհանոց և սանհանգույց:

Նախատեսվում է իրականացնել ընդհանուր օգտագործման երեք սանհանգույց, որոնցից մեկը բնակչության սակավաշարժ խմբերի համար:

Շինության կրող կոնստրուկցիան նախատեսվում է իրականացնել փայտից, իսկ երեսապատումը քարից կամ կերամոգրանիտից:

Տանիքածածկն իրականացվելու է իզոգամից:

Օժանդակ շինության արտաքին առավելագույն չափերը կազմում են՝ **16.9** x **7.9** մ:

Օժանդակ շինության հարկի առավելագույն բարձրությունը կազմում է՝ **3.50** մ:

Տե՛ս՝ հավելված 1 էջ *Ճ03. 6*

ԱԿՏԻՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ (Սպորտային հրապարակ)

Նախագիծն իր մեջ ներառում է սպորտային դաշտ մարզումների և սպորտային խաղերի անցկացման համար:

Դաշտը իր չափերով համապատասխանում է ստանդարտներին:

Տարածքում նախատեսվում է տեղադրել նստարաններ: Նստարանների վերևում որպես ծածկ նախատեսվում է օգտագործել արևային լուսավոլտային պանելները, որոնք կօգտագործվեն այգում անհրաժեշտ հոսանքի ծախսը բավարարելու համար:

ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ

Այգու տարածքում նախատեսվում է կառուցել խաղահրապարակ երեխաների համար՝ ֆիզիկական և զարգացնող խաղերով, որոնք պատրաստված կլինեն բնական ու էկոլոգիապես անվտանգ նյութերից:

Նկարներ տեղանքից





Հայկական զարդանախշեր





Ամֆիթատրոն





Սրճարան





Օժանդակ շինություն



Խաղահրապարակ



ՏԻՈ-կենտրոն





Նստարան եվ ջրային տարածքներ



ԱԿՏԻՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ(Սպորտային հրապարակ)

